Ինչու՞ ընտրել մեզ՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է ավելի քան 24 տարի և ապահովագրական շուկայում ունի իր կայուն դիրքը: Ընկերության հաջողության գրավականը մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձանցից կազմված թիմն է և թիմի ներսում տիրող դրական մթնոլորտը: Ընդառաջ գնալով ժամանակի մարտահրավերներին՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ–ն իր թիմակիցների համար մշտապես ստեղծում է աշխատանքային բարենպաստ պայմաններ՝ ժամանակ առ ժամանակ տարբեր բնույթի բենեֆիթներ տրամադրելով:

Պաշտոնը՝ Վթարների սպասարկման բաժնի մասնագետ – Ընկերությունը փնտրում է ուշադիր, ճկուն և բանիմաց անձի, ով կզբաղեցնի նշված թափուր հաստիքը
Վարչություն/բաժին՝ Վթարների սպասարկման բաժին
Տարածաշրջան՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ 39
Կրթություն՝ Բարձրագույն
Պահանջներ՝

- Հայերեն լեզվի գերազանց, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն,
- Համակարգչի հետ աշխատելու գործնական հմտություններ՝ MS Office (Excel, Word) փաթեթների իմացություն
- Սեղմ ժամկետներում աշխատանքների կատարման հմտություն,
- Արդյունքների ստացման նպատակասլացություն,
- Սթրեսային իրավիճակներում աշխատելու կարողություն,
- Պարտաճանաչության և պատասխանատվության բարձր զգացում,
- Վարորդական վկայականի առկայություն:

Աշխատավարձ՝ պայմանագրային
Աշխատանքային գրաֆիկ՝ հերթափոխային
Պարտականություններ՝

- վթարի վայր մեկնում, վթարի գրանցում և լուսանկարում,
- վթարների վերաբերյալ առաջացած վիճահարույց հարցերի կարգավորում,
- վթարների սպասարկման գործընթացի կոորդինացում և կազմակերպում:

Ընտրելով մեզ ի՞նչ արտոնություններ և հնարավորություններ կստանաք Դուք.

- Առողջության ապահովագրության փաթեթ,
- Ընտանիքի անդամներին ապահովագրելու հնարավորություն,
- Տարեկան տրամադրվող վարձատրվող Day off-երի և Time off-երի հնարավորություն,
- Ընկերության կողմից սպասարկվող Visa Classic քարտ,
- Ծննդյան և նախատոնական օրերին աշխատանքը շուտ ավարտելու հնարավորություն,
- Ընկերության ներսում մասնագիտական փորձի փոխանակմանն ուղղված դասընթացներին մասնակցություն,
- Պարբերաբար թիմի որակավորման բարձրացմանն ուղղված սեմինարների կազմակերպում,
- Սոցիալ–մշակութային բնույթի միջոցառումների, թիմային հավաքույթների, կորպորատիվների մասնակցություն:

Անհրաժեշտ փաստաթղթեր և դիմելու կարգը՝

Եթե համապատասխանում եք մեր պահանջներին և ցանկանում եք համագործակցել մեզ հետ, կարող եք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել **hr@silinsurance.net** էլեկտրոնային հասցեին (թեմա դաշտում պարտադիր նշել պաշտոնի անվանումը):

Վերջնաժամկետ՝ 03.08.2024թ.: